ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/55
որոշման չկատրման վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի կողմից 21.04.2020թ.-ին ներկայացվել է բողոք:

ք. Երևան, Կոմիտաս 54 բ, հեռ. (+374) 11 28 93 25, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 21.04.2020թ.-ին:

27.04.2020թ.-ին բողոքը՝ 2-րդ պահանջի մասով, վերադարձվել է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ կետի հիմքով:

Բողոքը մնացած պահանջների մասով 22.04.2020թ.-ին կայացված որոշմամբ ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/55 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

29.04.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

19.05.2020թ.-ին և 21.05.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 19.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.05.2020թ.-ին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 21.05.2020թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/55 որոշմամբ որոշել է՝

«Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի կողմից 21.04.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/55 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել:

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.04.2020թ.-ի նիստի 3-րդ արձանագրությամբ «Ավետիսյան Հայկ Վազիրի» Ա/Ձ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումը:

2. Մնացած մասով բողոքը մերժել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել Կարգի 28-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ կայացված իրավապարտադիր որոշման կատարման մասին:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

ք. Երևան, Կոմիտաս 54 բ, հեռ. (+374) 11 28 93 25, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru